

## ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

#### **Ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրները, ընդունման անհրաժեշտությունը**

Գործերի պատահական բաշխման գործող կարգը ներդրվել է 2014 թվականին հունիսի 10-ին ՀՀ դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում: Այս համակարգի նպատակը եղել է ստեղծել դատավորների միջև գործերի բաշխման արդյունավետ և թափանցիկ համակարգ՝ բացառելով սուբյեկտիվ մոտեցումները: Այս պահանջը բխում էր ինչպես դատավորների անկախությունը ապահովելու տեսանկյունից, այնպես էլ «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների» 12-րդ կետի պահանջներից, համաձայն որի գործերի բաշխումը պետք է իրականացվի կամ պատահական սկզբունքով, կամ՝ կանխորոշված, հստակ և օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա:

Գործող կարգավորումներով սահմանված է, որ դատարան մուտքագրված քրեական, քաղաքացիական և վարչական գործերն անհապաղ մուտք են արվում համակարգչային ծրագիր և նույն օրը՝ ժամը 20:00-ին, **հավասարաչափ** բաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև՝ պատահական ընտրությամբ, և հաշվի չառնելով գործերի մուտքագրման հերթականությունը: Եթե գործերը հավասարաչափ բաշխել հնարավոր չէ, ապա գործերը բաշխվում են այն հաշվով, որ համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորներից յուրաքանչյուրին հանձնված գործերի միջև տարբերությունը չգերազանցի մեկը: Տվյալ դեպքում հաջորդ օրը գործեր բաշխելիս առաջին հերթին մեկական գործ պատահական ընտրությամբ հանձնվում է այն դատավորներին, որոնք նախորդ օրվա բաշխման արդյունքում ստացել են ավելի պակաս թվով գործեր, իսկ մնացած գործերը բաշխվում են ընդհանուր կարգով՝ բոլոր դատավորների միջև:

Այս սկզբունքից արված են բացառություններ դատարանների նախագահների, Արդարադատության խորհրդի կամ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորների համար, որի համաձայն յուրաքանչյուր ամիս նրանց հանձնված գործերի քանակը պետք է մինչև քսանհինգ տոկոսով պակաս լինի տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող մեկ դատավորին նախորդ 6 ամսվա ընթացքում հանձնված գործերի ամսական միջին քանակից: Ընդ որում այս տոկոսային միջակայքերը որոշում է դատարանների նախագահների խորհուրդը և սահմանում է հանձնվող գործերի կոնկրետ տոկոսաչափեր: Ավելին, այս բացառությունից ևս արվում է բացառություն, քանի որ Օրենսգիրքը նախատեսում է, որ Դատարանների նախագահների խորհուրդը բացառիկ դեպքերում, հաշվի առնելով որևէ դատարանում դատարանի նախագահի, Արդարադատության խորհրդի կամ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորի ծանրաբեռնվածությունը, կարող է սահմանել

առավելագույն տոկոսաչափը (քսանհինգ տոկոսը) գերազանցող տոկոսաչափեր<sup>1</sup>: Բացի այդ, յուրաքանչյուր դատավոր իր վարույթում առանձնակի բարդության գործի (գործերի) առկայության դեպքում կարող է դիմել Ղատարանների նախագահների խորհրդին՝ առաջարկելով իր անուն-ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ սահմանել իրեն բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ: Այդ դեպքում Ղատարանների նախագահների խորհուրդը կարող է որոշում կայացնել դատավորի անուն-ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ նախատեսել նրան բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ՝ դրա համար սահմանելով որոշակի ժամանակահատված, որը չի կարող գերազանցել 6 ամիսը, իսկ բացառիկ դեպքերում՝ 1 տարին:

Ինչ վերաբերում է մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող, ինչպես նաև այլ միջնորդություններին, այդ թվում՝ այլ պետությունների իրավասու մարմիններից ստացված դատական հանձնարարություններին, ապա դրանց բաշխումն իրականացվում է համապատասխան դատարանի նախագահի կողմից:

Ղատավորներին մակագրված գործերի քանակի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ՝

1. դատավորների միջև գործերը բաշխվում են անհավասարաչափ, ինչի արդյունքում նույն դատարանի մեկ դատավորի գործերի քանակը կարող է անհամեմատ շատ լինել նույն դատարանի մեկ այլ դատավորին մակագրված գործերի քանակից:
2. մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող, ինչպես նաև այլ միջնորդությունները, այդ թվում՝ այլ պետությունների իրավասու մարմիններից ստացված դատական հանձնարարությունները ևս բաշխվում են անհավասարաչափ:
3. Ղատարանների նախագահների խորհրդի կողմից 2015 թվականի մայիսի 18-ի թիվ 25L որոշմամբ սահմանված կոնկրետ տոկոսաչափերը առանց հիմնավորման անհավասարաչափ են բաշխված, ինչի պարագայում մեկ դատարանի նախագահն օգտվում է 95 տոկոս արտոնությունից, այսինքն նրան մակագրվում է գործերի ընդամենը 5 տոկոսը, իսկ այլ նախագահ 25 տոկոսից կամ առհասարակ որևիցե արտոնություն չունի, ինչը հակասում է ՀՀ Ղատական օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 3-րդ մասին:
4. Ղատարանների նախագահների խորհրդի կողմից 2015 թվականի մայիսի 18-ի թիվ 25L որոշմամբ սահմանված կոնկրետ տոկոսաչափերը չեն պահպանվում:

Այսպես՝ Երևան քաղաքում քաղաքացիական գործեր քննող դատավորին 2016 թվականին մակագրվել է 1029 քաղաքացիական գործ, ինչպես նաև 435 վճարման կարգադրության գործ և 333 մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող միջնորդություններ և դատական

---

<sup>1</sup> ՀՀ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին, ՀՀ արդարադատության խորհրդի, ՀՀ դատարանների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի, ուսումնական հարցերի հանձնաժողովների դատավոր անդամների հանձնվող գործերի կոնկրետ տոկոսաչափերը սահմանված են ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2015 թվականի մայիսի 18-ի թիվ 25L որոշման հավելված 3-4-ով:

հանձնարարություններ, այսինքն ընդհանուր առմամբ փաստացի 1797 գործ, իսկ նույն դատարանի այլ դատավորին մակագրված քաղաքացիական գործերի քանակը կազմել է 665, 337 վճարման կարգադրության գործ, մինչդեռ տական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում միջնորդություններ չեն մակագրվել և 5 դատական հանձնարարություններ, այսինքն ընդհանուր 1007 գործ: Նույն դատարանի նախագահին 2016 թվականի ընթացքում մակագրվել է 53 գործ: Վճարման կարգադրության գործեր և մինչդեռ տական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող միջնորդություններ և դատական հանձնարարություններ չեն մակագրվել: Նույն դատարանի քրեական գործեր քննող դատավորին մակագրվել է 66 քրեական գործ և 477 մինչդեռ տական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող միջնորդություններ և դատական հանձնարարություններ:

Մեկ այլ դատարանում քրեական գործեր քննող դատավորին մակագրվել է 56 քրեական գործ և 327 մինչդեռ տական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող միջնորդություններ և դատական հանձնարարություններ, իսկ նույն դատարանի նախագահին 24 քրեական գործ<sup>2</sup>:

Վերոգրյալ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ գործերի պատահական բաշխման համակարգը ոչ հավասարաչափ է բաշխում գործերը նույն դատարանի դատավորների միջև, ինչպես նաև հստակորեն չեն պահպանվում դատարանի նախագահներին տրված արտոնությունները: Բացի այդ, մինչդեռ տական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող միջնորդությունները և դատական հանձնարարությունները կատարվում են դատարանների նախագահների կողմից, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ դատավորների անկախությանը և հակասում է «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների» 12-րդ կետի պահանջներին:

Բացի այդ, դատավորի կարգավիճակի հիմնական բնութագրիչներից մեկը դրա միասնականությունն է: Դատավորի կարգավիճակի միասնականությունը նշանակում է ՀՀ բոլոր դատավորների իրավական վիճակի նույնություն՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք որ դատարանի դատավոր են: Այն ենթադրում է նաև բոլոր դատավորներին օրենքով վերապահված իրավունքների, նրանց համար սահմանված պարտականությունների, ինչպես նաև նրանց անկախության երաշխիքների միատեսակություն : Դատավորների միջև առկա տարբերությունները պայմանավորված են միայն դատական համակարգում համապատասխան դատարանի իրավասությամբ, օրինակ՝ վարչական դատարանի դատավորը քննում է միայն վարչական գործեր կամ միայն վերաքննիչ դատարանի դատավորը կարող է բեկանել առաջին ատյանի դատավորի դատական ակտը:

Դատավորի կարգավիճակի միասնականությունը բացառում է նրա գործունեության կամայական սահմանափակումը կամ դատավորին չարդարացված առավելություններ

<sup>2</sup> Վիճակագրական տվյալները ձեռք են բերվել ՀՀ դատական դեպարտամենտից

վերապահելը<sup>3</sup> : Իսկ այս պարագայում ստացվում է, որ խախտվում է միասնականությունը և որոշ դատավորների վերապահվում են չարդարացված արտոնություններ:

Գործերի անհավասարաչափ բաշխումը ոչ միայն խաթարում է դատավորների անկախությունը, այլ նաև ազդում է արդարադատության որակի վրա, քանի որ դատավորների գերծանրաբեռնվածության պարագայում դժվար է խոսել արդարադատության որակի մասին: Դատարանների ծանրաբեռնվածությունը թոթափելու համար նախ պետք է ապահովել բոլոր գործերի հավասարաչափ և պատահական բաշխման սկզբունքի պահպանումը: Բացի այդ դատարանի նախագահներին, Արդարադատության խորհրդի կամ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորներին տրվող արտոնությունները հստակ և հավասարաչափ չեն սահմանված, ինչը արհեստականորեն հանգեցնում է այլ դատավորների ծանրաբեռնվածության:

### **Առաջարկվող լուծումը**

Առաջարկվում է ընդունել «Հայաստանի Հանրապետության դատական օրենքագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է

- գործերի պատահական բաշխման կարգը կիրառել նաև մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող միջնորդությունների, դատական հանձնարարությունների և այլ միջնորդությունների նկատմամբ՝ դրանով բացառելով դատարանների նախագահների կողմից կամայական ու ոչ հավասարաչափ բաշխումը:

- դատարանի նախագահներին, Արդարադատության խորհրդի կամ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորներին տրամադրվող արտոնությունը սահմանափակել՝ նախատեսելով հստակ 5 տոկոս արտոնություն:

- վերոգրյալ կանոնից բացառությունները, այսինքն 5 տոկոսը գերազանցող արտոնություն սահմանելու իրավունքը վերապահել Բարձրագույն դատական խորհրդին՝ հաշվի առնելով 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ վերջինիս վերապահված դերն ու լիազորությունները:

### **Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում կապահովվի նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող միջնորդությունների, դատական հանձնարարությունների ու դատական ակտերի կատարման հետ կապված միջնորդությունների պատահական բաշխման կարգը: Բացի այդ դատարանի նախագահներին, Արդարադատության խորհրդի կամ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող

<sup>3</sup>Տե՛ս Մ. Գ. Խաչատրյան Դ. Մ. Խաչատրյան « Դատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում»

դատավորներին տրվող արտոնությունների սահմանափակումը կնպաստի մյուս դատավորների ծանրաբեռնվածության թրթափմանը, գործերի առավել առավել հավասարաչափ բաշխմանը, որն էլ իր հերթին կնպաստի արդարադատության որակի արդյունավետության բարձրացմանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ  
ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ**

**Հոդված 11.1. Գործերի պատահական բաշխման սկզբունքը**

1. Դատավորների միջև գործերը, այդ թվում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող միջնորդությունները, դատական հանձնարարություններն ու դատական ակտերի կատարման հետ կապված միջնորդությունները բաշխվում են պատահական ընտրության սկզբունքի հիման վրա՝ սույն օրենսգրքի 2.1-ին գլխով սահմանված կարգով:

*(11.1-ին հոդվածը լրաց. 10.06.14 ՀՕ-47-Ն)*

**Հոդված 21.2. Առաջին ատյանի դատարանում գործերի բաշխման կարգը**

1. Դատարան մուտքագրված քրեական, քաղաքացիական, վարչական գործերը, այդ թվում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացվող միջնորդությունները, դատական հանձնարարություններն ու դատական ակտերի կատարման հետ կապված միջնորդությունները անհապաղ մուտք են արվում համակարգչային ծրագիր և նույն օրը՝ ժամը 20:00-ին, հավասարաչափ բաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև՝ պատահական ընտրությամբ, և հաշվի չառնելով գործերի մուտքագրման հերթականությունը:

2. Եթե գործերը հավասարաչափ բաշխել հնարավոր չէ, ապա գործերը բաշխվում են այն հաշվով, որ համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորներից յուրաքանչյուրին հանձնված գործերի միջև տարբերությունը չգերազանցի մեկը: Տվյալ դեպքում հաջորդ օրը գործեր բաշխելիս առաջին հերթին մեկական գործ պատահական ընտրությամբ հանձնվում է այն դատավորներին, որոնք նախորդ օրվա բաշխման արդյունքում ստացել են ավելի պակաս թվով գործեր, իսկ մնացած գործերը բաշխվում են ընդհանուր կարգով՝ բոլոր դատավորների միջև:

3. Գործերի հանձնումը դատարանների նախագահներին, Արդարադատության խորհրդի կամ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորներին կատարվում է ընդհանուր կարգով, սակայն յուրաքանչյուր ամիս նրանց հանձնված գործերի քանակը պետք է հինգ տոկոսով պակաս լինի տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացումն ունեցող մեկ դատավորին նախորդ 6 ամսվա ընթացքում հանձնված գործերի ամսական միջին քանակից:

5. Բարձրագույն դատական խորհուրդը բացառիկ դեպքերում, հաշվի առնելով որևէ դատարանում դատարանի նախագահի, Արդարադատության խորհրդի կամ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի կամ ուսումնական հարցերի

հանձնաժողովի անդամ հանդիսացող դատավորի ծանրաբեռնվածությունը, կարող է սահմանել սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հինգ տոկոսը գերազանցող տոկոսաչափեր:

6. Դատավորի վարույթում առանձնակի բարդության գործի (գործերի) առկայության դեպքում դատավորը կարող է դիմել Բարձրագույն դատական խորհրդին՝ առաջարկելով իր անուն-ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ սահմանել իրեն բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ: Այդ դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը կարող է որոշում կայացնել դատավորի անուն-ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ նախատեսել նրան բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ՝ դրա համար սահմանելով որոշակի ժամանակահատված, որը չի կարող գերազանցել 6 ամիսը, իսկ բացառիկ դեպքերում՝ 1 տարին:

7. Եթե դատավորը արձակուրդի մեջ է (ներառյալ՝ արձակուրդին նախորդող 20-օրյա ժամանակահատվածը) կամ գործուղվել է (ներառյալ՝ գործուղմանը նախորդող 20-օրյա ժամանակահատվածը և գործուղման ժամկետի ավարտին նախորդող 30-օրյա ժամանակահատվածը) կամ բացակայում է ժամանակավոր անաշխատունակության հետևանքով, կամ նրա լիազորությունները կասեցվել են, կամ նրա պաշտոնավարման տարիքի ավարտին մնացել է 3 ամիս, ապա այդ դատավորի անուն-ազգանունը համապատասխան ժամկետով պետք է հանվի բաշխման ցանկից՝ նշելով իրավական հիմքը և ժամկետը:

8. Նոր դատավոր նշանակվելու դեպքում այդ դատավորին գործերի բաշխումը կատարվում է ընդհանուր կարգով:

9. Եթե ընդհանուր իրավասության դատարանն ունի նստավայրեր, որոնցում գործում է նույն մասնագիտացումն ունեցող առնվազն երկու դատավոր, ապա այդ դատարանի նախագահը, համաձայն օրենքով սահմանված ընդդատության կանոնների, որոշում է այն նստավայրը, որտեղ պետք է քննվի տվյալ գործը, իսկ գործերի բաշխումը այդ նստավայրում գործող դատավորների միջև կատարվում է սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով:

10. Եթե դատարանի նստավայրում առկա է միայն մեկ դատավոր, և օրենքով սահմանված ընդդատության կանոնների համաձայն՝ դատարանի նախագահը որոշել է, որ գործը պետք է քննվի տվյալ նստավայրում, ապա սույն հոդվածով նախատեսված գործերի բաշխման կարգը տվյալ նստավայրում չի կիրառվում, իսկ գործը հանձնվում է այդ դատավորին:

11. Այն դեպքում, երբ մուտքագրված գործը, համաձայն օրենքի, ենթակա է քննության դատավորների կոլեգիալ կազմով, ապա տվյալ գործը սույն հոդվածով սահմանված կարգով հանձնվում է դատական կազմը նախագահող դատավորին, իսկ դատական կազմի մյուս դատավորները որոշվում են սույն հոդվածով սահմանված կարգով:

*(21.2-րդ հոդվածը լրաց. 10.06.14 ՀՕ-47-Ն)*

#### **Հոդված 21.4. Վճռաբեկ դատարանում գործերի բաշխման կարգը**

1. Վճռաբեկ դատարանի պալատի կողմից բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում այդ գործը նույն օրը մուտքագրվում է համակարգիչ և տվյալ պալատի

դատավորների միջև բաշխվում սույն օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 1-8-րդ և 12-րդ մասերով սահմանված կարգով: Բաշխման արդյունքում որոշվում է տվյալ գործով զեկուցող դատավորը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահին և պալատների նախագահներին գործ չի հանձնվում, և նրանց անուն-ազգանունը չի ներառվում բաշխման ցանկում, բացառությամբ այն դեպքերի, երբ վճռաբեկ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի նախագահն այդ մասին գրավոր դիմում է Բարձրագույն դատական խորհրդին: Այդ դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում վճռաբեկ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի նախագահի անուն-ազգանունը բաշխման ցանկում ներառելու մասին՝ սահմանելով նաև սույն օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 3-րդ կամ 5-րդ մասով նախատեսված տոկոսաչափը:

*(21.4-րդ հոդվածը լրաց. 10.06.14 ՀՕ-47-Ն)*

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆԻՆ»**

Մեծարգո պարոն նախագահ,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Գրությանը կից ներկայացվում է՝

- ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Արփինե Հովհաննիսյան),
- բ) նախագծի ընդունման հիմնավորումը,
- գ) գործող օրենքի փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Ազգային ժողովի պատգամավոր՝  
Ազգային ժողովի պատգամավոր՝  
Ազգային ժողովի պատգամավոր՝  
Ազգային ժողովի պատգամավոր՝

Արփինե Հովհաննիսյան (001)  
Շուշան Սարգսյան (017)  
Գևորգ Պետրոսյան (075)  
Էդմոն Մարության (090)